ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» փետրվարի 2026 թ. N 32-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2026 թվականի հունվարի 29-ի N ՔՏՄ/14.4.1/1271-26 գրությամբ ներկայացված միջնորդությունն ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 10-ի N 4 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում» 1-ին դասի ՔՊԼ-000762 լիցենզիայի «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» ՔՊՆ-000762-04 ներդիրի գործողությունը Երևան քաղաքի Լվովյան փողոց 2/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան բնակելի համալիրում շինարարական գործունեություն իրականացնելու նկատմամբ: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Կասեցման ժամանակահատվածում «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինական գործողությունները սահմանափակել Երևան քաղաքի Լվովյան փողոց 2/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ուղղությամբ, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են լիցենզիայի գործողության կասեցման պատճառները վերացնելուն, ինչպես նաև անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն (Երևան քաղաքի Լվովյան փողոցին հարող ճանապարհահատվածի ինքնափլուզման կանխարգելիչ միջոցառումներ):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2/25/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ